

**ՍՈՒՐԵՆ ՋՐՄՈՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԱՐՓԻՆԵ ՄԱՐԳԱՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի  
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության  
մշակման վարչության առաջատար մասնագետ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջազգային և եվրոպական  
իրավունքի ամբիոնի մագիստրանտ

## **ԱՊՈՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՄԱՆ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Գիտական աշխատանքը նվիրված է ապօրինի հարստացման հանցակազմին: Հեղինակները վերլու-  
ծության են ներարկել խնդրո առարկա հանցակազմի կարգավորումները, վեր հանել որոշ հիմնախնդիր-  
ներ և ներկայացրել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

**Հիմնարարեր՝ ապօրինի հարստացում, կոռուպցիայի դեմ պայքար, ապօրինի հարստացման հիմ-  
նական դրսևորումներ, անմեղության կանխավարկած, արդար դատարժնություն, ապացուցման քեզ, մի-  
ջազգային իրավական փոխօգնություն, ակադիմիկների վերադարձ:**

Կոռուպցիայի դեմ պայքարը վաղուց արդեն դուրս է եկել ազգային, ներպետական կարգավոր-  
ման շրջանակներից և դարձել միջազգային հան-  
րության հոգածության առարկա:

Կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիք է հանդիսանում Սիավորված ազգերի կազ-  
մակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից  
2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում  
ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (այսու-  
հետ՝ Կոնվենցիա): Հայաստանի Հանրապետու-  
թյունը վավերացրել է Կոնվենցիան Հայաստանի  
Հանրապետության Ազգային Ժողովի 2006 թվա-  
կանի հոկտեմբերի 23-ի թիվ Ն-303-3 որոշմամբ<sup>2</sup>:

Ի թիվս այլ կարգավորումների՝ Կոնվենցիայի 20-րդ հոդվածն ամրագրում է. «Ֆր սահմանադրու-  
թյունը և իր իրավական համակարգի հիմնարար  
սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրա-  
քանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի  
այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնար-  
կելու հնարավորությունը, որոնք կարող են անհրա-  
ժեշտ լինել, որ, որպես քրեական իրավախախտում  
ճանաչվի անօրինական հարստացման արարքը,  
եթե դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝  
պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից  
ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական  
եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն  
հիմնավորել:»:

Ի կատարումն միջազգային հարթակում Հա-  
յաստանի Հանրապետության կողմից ստանձնած

պարտավորության՝ Հայաստանի Հանրապետու-  
թյան Ազգային Ժողովը «Հայաստանի Հանրապե-  
տության քրեական օրենսգրքում լրացում կատա-  
րելու մասին» Հայաստանի Հանրապետության  
2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-230-Ն օրեն-  
քով քրեականացրել է ապօրինի հարստացման  
հանցակազմը<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության քրեական  
օրենսգրքում լրացվող՝ ապօրինի հարստացման  
հանցակազմը քրեականացնող 310.1-րդ հոդվածի  
վերլուծությունը հանգում է հետևյալին.

1) Հանցակազմի գործողությունը տարածվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հայտարարագիր ներկայացնելու պարտականու-  
թյուն ունեցող անձանց վրա: Այսինքն՝ հանցակազ-  
մի սուբյեկտ են դիտարկվում բարձրաստիճան  
պաշտոնատար անձը և նրա հետ փոխկապակց-  
ված անձը (բարձրաստիճան պաշտոնատար անձի  
հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համա-  
տեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը)<sup>4</sup>:  
**Ողջամիտ հարց է ծագում՝ արդյո՞ք սուբյեկտային  
նման կազմ սահմանելը չի սահմանափակում հան-  
ցակազմի գործողության շրջանակները և նպաս-  
տում կոռուպցիայի դեմ պայքարում կարևորագույն  
գործիք հանդիսացող այս հանցակազմի ոչ լիար-  
ժեք իրացմանը:**

Իհարկե անվիճելի է, որ քննարկվող հանցա-  
կազմի քրեականացման հարցում միջազգային

փորձում ներդաշնակություն չի տիրում, ուստի, ողջունելի է հայրենական քրեական քաղաքականության մեջ նման փոփոխության ամրագրումը, անգամ՝ եթե դա կատարվում է սուբյեկտային այդպիսի կազմով։ Այդուհանդերձ, բարձրացված հարցի համալիր ուսումնասիրության համար անհրաժեշտ ենք համարում անդրադարձ կատարել խնդրո առարկայի առնչությամբ միջազգային փորձում առկա մոտեցումներին։ Այսպես, օրինակ՝ *Ուկրաինայի Հանրապետությունը* որպես ապօրինի հարստացման հանցակազմի սուբյեկտ է դիտարկում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի լիազորություններ իրականացնելու իրավասություն ունեցող անձին, *Մոլդովայի Հանրապետությունը՝* պաշտոնատար կամ հանրային անձին, *Պերուի Հանրապետությունը՝* պաշտոնատար անձին կամ հանրային ծառայողին։ Իսկ *Լիխվայի Հանրապետությունը* հանցակազմի գործողությունը տարածում է յուրաքանչյուր անձի, *Մոլվակիայի Հանրապետությունը՝* յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի վրա։

Հատկանշական է, որ հանցակազմի սուբյեկտների ընտրության առումով անկյունաբարային նշանակություն ունի հանցակազմի բացահայտման ուղղված պատշաճ գործիքակազմի առկայությունը։ Հարկ է փաստել, որ ապօրինի հարստացման հանցակազմի բացահայտման ուղղված, թերևս, հիմնական գործիքը գույքի և եկամուտների հայտարարագրերն են։ Հետևաբար, հանցակազմի սուբյեկտային կազմն ընտրելիս պետք է առաջնորդվել նաև գործնականում արդյունավետ քննության ապահովման միտումով։

Այսպիսով, կարելի է պնդել, որ խնդրո առարկա օրենսդրական կարգավորումը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տրամաբանական շարունակությունն է, քանի որ այն, որպես ոիսկային խումբ, թիրախավորում է բարձրաստիճան պաշտոնատար անձին և նրա հետ փոխկապակցված անձանց՝ վերջիններին վրա դնելով գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն։

Սիևնույն ժամանակ, գտնում ենք, որ հանցակազմի սուբյեկտային կազմի ընդլայնումը պարտադիր է՝ փոլսային սկզբունքով ներառելով բոլոր հանրային ծառայողներին։ Ավելին, հանցակազմի սուբյեկտային կազմում բոլոր հանրային ծառայողներին չընդգրկելու պարագայում ապօրինի հարստացման հանցակազմի պրեվենտիվ նշանակությունը էապես կնվազի, քանի որ բարձրաստիճան պաշտոնատար անձինը իրենց գույքը կարող են տնօրինել երրորդ անձանց միջոցով, որոնց ֆինանսական անցուղարձել վերահսկելի չէ։ Այլ կերպ՝

սուբյեկտային կազմի հետագա ընդլայնան դեպքում պաշտոնատար անձանց կոռուպցիոն վարքագծի կանխարգելման հիմնախնդիրը էապես կշահի։ Նման մոտեցումը կօգնի առավելագույնս նվազեցնել պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահման արատավոր պրակտիկան։ Ընել որում՝ հանցակազմի սուբյեկտների ընդլայնման համար անհրաժեշտ է պարզապես համապատասխան փոփոխություններ կատարել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, քանի որ վերջինս է սահմանում, թե ովքեր ունեն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն։

Սիևնույն ժամանակ, մենք այն համոզմանն ենք, որ գործնականում խնդրո առարկա հանցակազմի կիրառումն էապես կախված է նաև ֆինանսական թափանցիկության և ֆինանսական ոլորտում կոռուպցիոն ոիսկերի նվազեցմանն ուղղված արդյունավետ ծրագրերի ներդրումից։

2) Օրենսդրության բվարկվել են ապօրինի հարստացման հիմնական դրսերումները։ Այսպես, ապօրինի հարստացման դրսերումներն են՝

ա. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի գույքի ավելացումը և (կամ)

բ. պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով։

Կոնկենցիոն ամրագրումից բխում է, որ ապօրինի հարստացման դրսերման ձևը պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումն է։ *Սակայն, իրավական պետության անխզելի բաղադրիչը համարվող իրավական որոշակիության սկզբունքի տևանկյունից արդյոք արդարացված կիմեր «ակտիվներ» հասկացության գործածումը։*

Բարձրացված հարցին պատասխանելու համար նախնառաջ հարկ ենք համարում «ակտիվներ» հասկացությունը մեկնարանել լեզվական տեսանկյունից։

Այսպես, «ակտիվ» բառը նշանակում է գործունյա, գործուն, հաջորդություն, նվաճում, իսկ հաշվապահական եզրաբանությամբ ընկալվում է որպես գույք, ունեցվածքը։ Հատկանշական է, որ հայրենական օրենսդրության մեջ «ակտիվ» բառը ևս մեկնարանվում է հաշվապահական հաշվառման կարգավորումների համատեքստում։

Միջազգային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդել, որ որոշ պետություններ խուսափում են «ակտիվների աճ» ընդհանրական հաս-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կացության գործածությունից՝ օրենսդրության բարկելով ապօրինի հարստացման հիմնական դրսւորումները: Օրինակ՝ *Մոլլովայի Հանրապետության* քրեական օրենսգրքի 330.2-րդ հոդվածով՝ որպես ապօրինի հարստացման դրսւորում է ամրագրվում պաշտոնատար կամ հանրային անձի կողմից անձամբ կամ երրորդ անձի կողմից սեփականություն ունենալը, որի արժեքը եականորեն գերազանցում է իր եկամուտները: *Մոլլովայի Հանրապետության* 2010 թվականի «Գույքի ծագման ապացուցման մասին» օրենքի հմաստով ապօրինի հարստացում է դիտարկվում այն դեպքը, եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ձեռք բերված գույքի արժեքը օրինական եկամուտին գերազանցում է առնվազն նվազագույն աշխատավարձի 1500-ապատիկով: *Ազստրալիայում* ապօրինի հարստացումը գետեղվել է «անհիմն հարստություն» եզրաբանության ներքո: 2010 թվականի «Հանցագործություններից ստացված եկամուտների մասին» դաշնային օրենքով<sup>8</sup> անհիմն հարստացումը սահմանված է որպես անձի հարստության ընդհանուր արժեքի և իր օրինական ճանապարհով ձեռք բերված եկամտի տարբերություն:

Ճիշտ է, «ակտիվների աճի» ներքո, որպես կանոն, հասկացվում է ոչ միայն ունեցվածքի՝ դրամական միջոցների կամ սեփականության գգալի չափով գերազանցումը օրինական եկամուտներին, այլև պարտքերի մարումը, պարտավորությունների կատարումը, ինչպես նաև ապրելակերպի անհամապատասխանությունը օրինական եկամուտներին, սակայն, կարծում ենք՝ քննարկվող հասկացությունն իրավական որոշակիության տեսանկյունից ընդհանրական է և զործնականում կարող է տարբերությունների, տարակարծությունների տեղիք տալ:

Այս համատեքստում տեղին է նաև նշել, որ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը* 2008 թվականի մայիսի 13-ի թիվ U-Դ-753 որոշման<sup>9</sup> մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում առ այն, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաշափ մատչելի՝ իրավունքի սուրբեկությունը պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը բույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կան-

խատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողությունը :

Նոյնարովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ *ՄԻԵԴ*) վճիռներում<sup>11</sup>:

Հիմք ընդունելով վերոգրյալ՝ գտնում ենք, որ քննարկվող դիտանկյունից ապօրինի հարստացման հանցակազմի կարգավորումները համապատասխանում են *ՄԻԵԴ*-ի կողմից սահմանված «օրենքի որակ» եզրույթի չափանիշներին: Այլ կերպ՝ ապօրինի հարստացման դրսւորման ձևերի բվարկման հարցում հայ օրենսդիրը որդեգրել է արդարացված մոտեցում:

Ինչպես նշեցինք, ապօրինի հարստացման հիմնական դրսւորումները երկուսն են՝ *գույքի ավելացումը* և (կամ) *պարտավորությունների նվազումը*. Մինչեւո, գործնականում պաշտոնատար անձը կարող է կատարել իր օրինական եկամուտներին անհամապատասխանությունը օրինական եկամուտներին, սակայն, կարծում ենք՝ քննարկվող հասկացությունն իրավական որոշակիության տեսանկյունից ընդհանրական է և զործնականում կարող է տարբերությունների, տարակարծությունների տեղիք տալ:

Այս համատեքստում անդրադառնալով միջազգային փորձին՝ սահմանափակվենք միայն *Չինաստանի Ժողովրդական Հանրապետության* օրինակով, որի քրեական օրենսգրքում<sup>12</sup> ապօրինի հարստացումը քրեականացնող 395-րդ հոդվածում, որպես ապօրինի հարստացման դրսւորման ձև, նախատեսված է նաև օրինական եկամուտները գերազանցող ծախսերի կատարումը:

Վերոգրյալը բույլ է տալիս պնդել, որ փուլային սկզբունքով, որպես ապօրինի հարստացման դրսւորում պետք է ամրագրել նաև ծախսերի կատարումը:

3) Ապօրինի հարստացման հանցակազմը մշտապես թեժ քննարկումների տեղիք է տվել այն առումով, որ շատերը հանցակազմը դիտարկում են հիմնարար այնպիսի սկզբունքների հետ հակադրության համատեքստում, ինչպիսիք են արդար դատաքննությունը և անմեղության կանխավարկածը:

Որոշ հեղինակներ պնդում են, որ խնդրուած առարկա հանցակազմը խախտում է մեղադրյալի իրավունքները, քանի որ բացակայում է քրեորեն պատմելի այն գործողությունը, որը պետք է ապացուցվի: Այլ խոսքով՝ հանցակազմի օրյեկտիվ կողմը լիարժեք կերպով չի բացակայում, այսինքն հստակեցված չէ, թե հանրորեն վտանգավոր ինչպիսի գործողության արդյունքում կարող է վրա հասնել քրեական պատասխանատվություն: Հարկ է փաստել, որ ապօրինի հարստացման հանցա-

կազմի օբյեկտիվ կողմն առանձնանում է նրանով, որ անձի գույքի ավելացումը կամ պարտավորությունների մարումը հանդիսանում է «նախորդող հանցագործություն» (predicate offence), որը կարող է հիմք հանդիսանալ անձին մեղադրանք առաջադրելու և նրան որպես մեղադրյալ ներգրավելու համար: Այլ կերպ՝ հանցակազմը հետևանքային հանցակազմ է:

Հեղինակների մոտ մտահոգության տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ ակտիվների աճը օրինական եկամուտներով հիմնավորելու պարտականության պարագայում մեղադրյալը կրում է ինքնաբացահայտման ռիսկեր:

Այսպես, ամդրադառնալով անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքին՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով (2015 թվականի դեկտեմբերի 6) անմեղության կանխավարկածը նախատեսող սահմանադրական դրույթը ամրագրման հարցում կրել է էական փոփոխություններ: Մասնավորապես՝ սահմանադրական նախկին դրույթը նախատեսում էր, որ. «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի (հոդված 21): 2015 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 66-րդ հոդվածն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նշելով, որ. «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Կոնվենցիայի 20-րդ հոդվածի տրամարանությունից բխում է, որ հանցակազմի ապացուցման բեռք քաշխվում է՝ պաշտոնատար անձի վրա վրա թողնելով ակտիվների նշանակալից աճի օրինական լինելու հանգանանքի հիմնավորումը (պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, ... որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել): Այս առումով, հայ օրենսդիրը, եմելով Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության ընդհանուր տրամարանությունից, գործածում է հետևյալ ձևակերպումը. «... Գույքի ավելացումը, և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են («Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունե-

ցող անձի) օրինական եկամուտները և ողջամտությեն (չեն հիմնավորվում) դրանցով...»:

ՄԵՇԿ-ի դիրքորոշման համաձայն՝ ապօրինի հարստացման հանցակազմը, որն ընդգրկում է «նախորդող հանցագործություն», համահունչ է անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի դեռ.

1) քրեական հետապնդման մարմինն է պարտավոր ապացուցել այն գործողությունները, որոնք փոփոխության են ենթարկել անձի գույքը կամ եկամուտները, և

2) ենթադրյալ գործողությունները կարող են հերքվել և վիճարկվել :

Նոյնանման մոտեցում է ցուցաբերում նաև արտասահմանյան դատական պրակտիկան: Մասնավորապես՝ Հոնկոնգի վերաբննիշ դատարանն ընդգծում է, որ հանցակազմը չի շրջանցում ապացուցման բեռի գաղափարը, քանի դեռ հանցագործության հատկանիշների ապացուցման պարտականությունը մնում է քրեական հետապնդման մարմնի ուսերին, իսկ ենթադրյալ հանցագործը կարող է հակադարձել ապօրինի հարստացման ենթադրությանը<sup>14</sup>: Ըստ դատարանի՝ մեղադրյալը պետք է ներկայացնի ոչ թե գործարքների բնույթը, այլ միմիայն գործարքների գոյությունը հավաստող փաստեր: Հանցակազմի առկայության ապացուցման պարտականությունը շարունակում է մնալ դատախազության վրա, որը դեռ պետք է ողջամիտ կասկածից վեր ապացուցման ստանդարտով ապացուցի, որ ներկայացված՝ գործարքի գոյությունը հավաստող ապացույցը չի հիմնավորում հարստության օրինական ծագումը:

Վերօքյալ դիրքորոշումները բխում են նաև Կոնվենցիայի իմպլեմենտացմանն ուղղված օրենսդրական ուղեցույցից, որի համաձայն՝ ապօրինի հարստացման հանցակազմի պայմաններում առկա չէ մեղադրության կանխավարկած, քրեական հետապնդման մարմինները պետք է ապացուցեն, որ անձի ակտիվների աճը չի համընկնում նրա օրինական եկամուտների հետ, իսկ ենթադրյալ հանցագործը պետք է ներկայացնի ողջամիտ բացատրություն՝<sup>15</sup>:

Այս համատեքստում վերոգրյալ օրենսդրական ձևակերպումը քննարկելիս՝ նախևառաջ անհրաժեշտ ենք համարում անդրադարձ կատարել ապօրինի հարստացման հանցակազմի ապացուցման բեռի բաշխման ինստիտուտին:

Այսպես, ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քրեադատավարական օրենքով նախատեսված գործիքակազմի կիրառմամբ բացահայտել անձի հնարավոր բոլոր օրինա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան եկամուտների շրջանակը և, ըստ այդ, ձեռք բերել ապացույցների բավարար համակցություն, որը հաստատում է, որ կա էական անհամապատասխանություն՝ անձի օրինական եկամուտների և փաստացի ձեռք բերված գույքի և (կամ) մարված պարտավորությունների միջև։ Այլ խոսքով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգործի 310.1-րդ հոդվածով անձին՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելիս, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշման նկարագրական–պատճառաբանական մասում հիմնավորի հետևյալ տեղեկատվությունը։

1) մեղադրյալ ներգրավելու օրը մեղադրյալի ենթակայության տակ գտնվող գույքի և եկամտի չափը։

2) մեղադրյալ ներգրավելու օրը որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի կողմից հայտարարագրված կամ այլ կերպ հայտնի դարձած օրինական եկամտի և գույքի չափը։

3) առկա անհամապատասխանության էական լինելը 1-ին և 2-րդ կետերի միջև։

Անհրաժեշտ է նկատել, որ նման կարգավորմամբ կարող է փարատվել այն մտավախտությունը, որ գործնականում այս նորմը կարող է մեկնաբանվել այնպես, որ սույն հարստացման փաստի առկայությունը, այսինքն՝ հայտարարագրված և փաստացի եկամուտների անհամապատասխանությունը, մեխանիկորեն կանխավարկում է անձի մեղքը։

Ինչ վերաբերում է ենթադրյալ հանցագործի վրա հանցակազմի ապացուցման բերի առումով որոշակի պարտականություններ սահմանելուն, ապա հարկ է նշել, որ ենթադրյալ ապօրինի հարստացողի՝ իր գույքի ավելացման և (կամ) պարտավորությունների նվազման օրինականությունը հիմնավորելու պարտականությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինն օրենքով սահմանված գործիքակազմով ապացուցել է անձի օրինական եկամուտների և ձեռք բերված գույքի և (կամ) մարված պարտավորությունների միջև առկա անհամապատասխանությունը։ Միևնույն ժամանակ, կարո՞ղ է նման կառուցակարգը հակասություն առաջացնել մեղադրյալի՝ ցուցմունք տալուց ազատվելու համաւերսառում։ Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ որ անձը բոլոր դեպքերում ունի լրություն պահպանելու իրավունք։ Պարզապես, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվել բավարար ապացույցներ, որոնք հիմնավորում են, որ կա էական անհամապատասխանություն անձի օրինական և փաստացի եկամուտների միջև, իսկ անձն էլ, ով իր եկամուտների օրինականության վե-

րաբերյալ տեղեկությունների միակ կրողն է, իրազեկման միակ աղբյուրը, չի օգտվում հակաֆաստարկներ ներկայացնելու հնարավորությունից, ապա այս իրավիճակում անձի լրությունն, ըստ էության, ի վեաս իրեն մեկնաբանելը կարող է իրավաչափ համարվել։

Ասվածը հիմնավորելու համար տեղին է նաև մատնանշել ՄԻԵԴ-ի՝ Փամ Հունագն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը<sup>17</sup>։ Մասնավորապես՝ նշյալ գործով կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս։ Ֆրանսիական օրենսդրությունը սահմանում է, որ արգելված ապրանքներ տեղափոխելը, որոնց շարքի մեջ է մտնում նաև հերոինը, համարվում է անօրինական, եթե այդ ապրանքը տեղափոխող անձը չի ապացուցում հակառակը, օրինակ՝ ներկայացնում է արդարացնող բավարար ապացույցներ կամ ապացուցում, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կամ սխալի հետևանք է, որից խուսափելն անհնար էր։ Նշյալ գործում պաշտպանության կողմը չի ներկայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն։ ՄԻԵԴ-ը, քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ անբույատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որը տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում՝ նա կճանաչվի մեղավոր։

Վերոգրյալի համայիր վերլուծությունից բխում է, որ հանցակազմի ապացուցման բեռի բաշխումը չի հակասում անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքին։

Ինչպես նշեցինք, ապօրինի հարստացման հանցակազմի բացահայտմանն ուղղված, թերևս, հիմնական գործիքը գույքի և եկամուտների հայտարարագրերն են։ Արդյո՞ք հայտարարագրում ներառված այս կամ այն տվյալի ստուգումը գործնականում կարող է քրեական հետապնդման մարմնին փակուղու առջև կանգնեցնել։

Այսպես, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ նշյալ օրենքի իմաստով հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պետք է հայտարարագրեն նաև օտարերկրյա պետությունում գտնվող գույք կամ եկամուտներ, ապա քրեական հետապնդման մարմինն այդպիսի տվյալների իսկությունը ստուգելու նպա-

տակով պետք է դիմի միջազգային համագործակցության որևէ ձևաչափի օգնությանը:

Սակայն հարկ է նշել, որ պետությունների կողմից միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացված իրավական վոլուսության հարցումները կարող են մերժվել ապօրինի հարստացման հանցակազմի երկակի քրեականացման բացակայության պայմաններում: Երկակի քրեականացման պահանջից բխում է, որ հարցմանը պատասխանելը կախված է այն հանգամանքից, թե արդյո՞ք հարցման հիմք հանդիսացող հանցագործությունը քրեականացված է և հարցումը ներկայացնող, և՝ հարցումը ստացող պետությունների օրենսդրություններով: Որոշ պետությունների օրենսդրությամբ պահանջվում է հանցակազմերի լիակատար համապատասխանություն թե՛ հանցակազմի անվանման, թե՛ դրա հատկանիշների առումով: Միաժամանակ կան պետություններ, որոնք հիմնվում են միայն հանցագործությունների համարժեքության պահանջիվ վրա:

Հատկանշական է, որ Կոնվենցիան որդեգրել է երկրորդ մոտեցումը: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե միջազգային համագործակցության հարցերի առնչությամբ պահանջվում է պահպանել համապատասխան արարքը փոխադարձորեն իրավախախտում ճանաչելու սկզբունքը, ապա այն պետք է պահպանվի՝ անկախ նրանից՝ հայցվող Մասնակից պետության օրենսդրությունը համապատասխան արարքը ընդգրկո՞ւմ է այդ նույն կատեգորիայի իրավախախտումների մեջ, կամ նա արդյո՞ք նկարգում է այն նույն տերմինների օգնությամբ, ինչպես հայցող Մասնակից պետությունը, եթե իրավա-

խախտումը, որի կապակցությամբ օգնություն է հայցվում, քրեական իրավախախտում է ճանաչվում երկու Մասնակից պետությունների օրենսդրության համաձայն:

Վերոգրյալ հավասարապես վերաբերում է նաև ապօրինի հարստացման արդյունքում ձեռքբերված անդրահմանային ակտիվների վերադարձնելիության խնդրին:

Հաշվի առնելով վերոգրյալ՝ անհրաժեշտ է նպաստել պետությունների կողմից խնդրու առարկա հանցակազմի քրեականացմանը, որը կիանդիսանա կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի գրավականներից մեկը:

Հակիրծ անդրադառնանք նաև ապօրինի հարստացման հանցակազմով քրեական մեղադրանքի առաջադրման դեպքերին:

Կարծում ենք՝ ապօրինի հարստացման հանցակազմը քրեական հետապնդման մարմնի համար պետք է դիտարկվի որպես «վերջին գործիք»: Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ գործնականում կոռուպցիոն կոնկրետ հանցագործության դեպքում, օրինակ՝ կաշառք ստանալը, ապօրինի հարստացման հանցակազմը չի կարող դիտարկվել որպես համարժեք արձագանք կատարված հանցագործությանը: Ուստի, հայ օրենսդիրն արդարացի մոտեցում է ցուցաբերել՝ ամրագրելով, որ անձին կարող է մեղադրանք առաջադրվել կամ նրան մեղավոր ճանաչել ապօրինի հարստացման համար, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են:

<sup>1</sup> Կոնվենցիան հասանելի է հետևյալ հղմամբ՝

<sup>2</sup> [https://www.unodc.org/documents/brussels/UN\\_Convention\\_Against\\_Corruption.pdf](https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf) (16.03.17):

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

<sup>4</sup> Տե՛ս, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-230-Ն օրենքը, սկզբնադրյուրը՝ ՀՀՊՏ 2016.12.30/95(1275).1 Հոդ.1228.13:

<sup>5</sup> Հարկ է նշել, որ հանցակազմի սուրբեկտների նման շրջանակի նախատեսումը պայմանավորված է նաև միջազգային փորձի ուսումնասիրությամբ (Լիսպա, Ռումինիա, Արգենտինա, Սլովակիա (քաղաքացիականական հարրուրյունում), Ավստրիա):

<sup>6</sup> Տե՛ս, Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» Հրատ., 1976, տպագիր Հատոր 1, էջ 18:

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՕ-515-Ն օրենքի (սկզբնադրյուրը՝ ՀՀՊՏ 2003.02.12/9(244) Հոդ.154) 5-րդ, 17-րդ և 24-րդ հոդվածները:

<sup>8</sup> Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://lex.justice.md/ru/331268/> (16.03.17):

<sup>9</sup> Տե՛ս, Proceeds of Crime Act enacted in 2001, amended in 2010:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

<sup>9</sup> Տե՛ս, «Ուարիո Հայ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴ-753 որոշումը (հասանելի է հետևյալ հղմանը՝ <http://concourt.am/armenian/decisions/common/2008/index.htm> (16.03.17):

<sup>10</sup> Տե՛ս, նույն տեղում, կետ 9:

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ The Sunday Times v. United Kingdom, զանգատ թիվ 6538/74, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռ, կետ 49:

<sup>12</sup> Հասանելի է հետևյալ հղմանը՝ <http://www.fmprc.gov.cn/ce/cgvienna/eng/dbtyw/jdwt/crimelaw/t209043.htm> (16.03.17):

<sup>13</sup> Տե՛ս, Maud Pedriel-Vaissiere, The accumulation of unexplained wealth by public officials: Making the offence of illicit enrichment enforceable, U4 Brief 2012:1 (16.03.17):

<sup>14</sup> Տե՛ս, Salabiaku v. France (զանգատ թիվ 10519/83, 1998 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռ):

<sup>15</sup> Ավելի մանրամասն տե՛ս, Attorney General v. Hui Kin-hong, Hong Kong Court of Appeal, 1995:

<sup>16</sup> Տե՛ս, Legislative guide for the implementation of the United Nations Convention against Corruption (հասանելի է հետևյալ հղմանը՝ [https://www.unode.org/pdf/corruption/CoC\\_LegislativeGuide.pdf](https://www.unode.org/pdf/corruption/CoC_LegislativeGuide.pdf) (16.03.17):

<sup>17</sup> Տե՛ս, Pham Hoang v. France (զանգատ թիվ 13191/87, 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռ):

Սուրեն Կրմոյան  
Заместитель министра юстиции РА,  
Кандидат юридических наук

Արփին Սարգսյան

Ведущий специалист отдела развития антикоррупционной  
и пенитенциарной политики аппарата Министерства Юстиции РА,  
Магистр кафедры международного и европейского права  
юридического факультета ЕГУ

### РЕЗЮМЕ

#### *Некоторые проблемы состава преступления незаконного обогащения*

Данная научная работа посвящена составу незаконного обогащения. Авторы проанализировали регулировки состава преступления, выдвинули определенные проблемы и представили предложения касательно их решения.

**Ключевые слова:** незаконное обогащение, борьба против коррупции, основные формы незаконного обогащения, презумпция невиновности, справедливое судебное разбирательство, бремя доказывания, международная правовая взаимопомощь, возврат активов.

Suren Krmoyan  
Deputy minister of Justice of RA,  
PhD in law

Arpine Sargsyan

Leading specialist of the Department  
for Development of Anti-corruption and Penitentiary Policies  
of the Republic of Armenia Ministry of Justice  
LL.M student of the Chair of European and International Law  
of Yerevan State University

### SUMMARY

#### *Certain challenges in corpus delicti of illicit enrichment*

The scientific work is devoted to the corpus delicti of illicit enrichment. The authors have analyzed regulations of the discussed corpus delicti, outlined certain challenges and presented suggestions relevant solution mechanisms.

**Keywords:** illicit enrichment, fight against corruption, the main forms of illicit enrichment, presumption of innocence, fair trial, the burden of proof, international legal assistance, asset recovery.